ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 68-Ա

«30» մարտի 2022 թվականի գյուղ Ամասիա

ԱՐԹՈՒՐ ԼՅՈՎԱՅԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության, 5-րդ և 9-րդ մասերի, 9-րդ հոդվածի 15-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Արթուր Լյովայի Մկրտումյանի 2022 թվականի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ

1. Արթուր Լյովայի Մկրտումյանին 2022 թվականի ապրիլի 1-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի խորհրդականի պաշտոնում:
2. Աշխատավարձը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի սահմանած դրույքաչափի:

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«30» մարտի 2022 թվականի
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 69-Ա

«30» մարտի 2022 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով և ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի դրույթներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի.

1) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«30» մարտի 2022 թվականի

գյուղ Ամասիա

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի
2022թվականի մարտի 30-ի N 69 որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի կազմը՝

1. խորհրդի ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյան/,
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արտավազդ Ղուկասյան
3. խորհրդի քարտուղար-ազդարարման և իրազեկման պատասխանատու՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Էգնատոսյան ,
4. խորհրդի անդամներ՝
   1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու անդամ Անդրանիկ Վարդանյան,
   2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու անդամ Արտեմ Դավթյան,
   3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ՝

ա. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Արեգնադեմ բնակավայրի վարչական ղեկավար՝ Աշոտ Պողոսյան

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բանդիվան բնակավայրի վարչական ղեկավար՝ Դավիթ Մանուկյան

գ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բյուրակն բնակավայրի վարչական ղեկավար՝ Սեյրան Սարգսյան

դ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Գտաշեն բնակավայրի վարչական ղեկավար՝ Արմեն Էգնատոսյան

ե. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Մեղրաշատ բնակավայրի վարչական ղեկավար՝ Էդգար Թադևոսյան

զ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ողջի բնակավայրի վարչական ղեկավար՝ Նորայր Մկրտչյան

է. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Հովտուն բնակավայրի վարչական ղեկավար՝ Արարատ Առաքելյան

ը. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Հողմիկ բնակավայրի վարչական ղեկավար՝ Անդոկ Պողոսյան

թ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ալվար բնակավայրի վարչական ղեկավար՝ Վարդան Սուքիասյան

ժ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Զարիշատ բնակավայրի վարչական ղեկավար՝ Նորայր Տոնոյան

ի. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Արդենիս բնակավայրի վարչական ղեկավար՝ Զորկին Իսպիրյան
լ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Գառնառիճ բնակավայրի վարչական ղեկավար՝ Մանվել Ղազարյան
խ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ծաղկուտ բնակավայրի վարչական ղեկավար՝ Հովհաննես Մադոյան
ծ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բերդաշեն բնակավայրի վարչական ղեկավար՝ Գերասիմ Կույումչյան
4) ոլորտային պատասխանատուներ՝
ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ ՀՀ Շիրակի մարզային փրկարական վարչության Ամասիայի թիվ 50 հրշեջ - փրկարարական ջոկատի հրամանատար Հովիկ Կարապետյան /(համաձայնությամբ),
բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Ասքանազ Դավթյան ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Ամասիայի բաժնի ոստիկանության պետ/(համաձայնությամբ),
գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ «Աշոցքի ավտո-տրանսպորտային և ճանապարհների» փակ բաժնետիրական ընկերության ինժեներ Ալեքսան Քոչոյան
դ. կապի պատասխանատու Սենիկ Կարապետյան «Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության աշխատակից
ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Ամասիայի առողջության կենտրոնի տնօրեն Աննա Մկոյան /(համաձայնությամբ),
զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի խորհրդական Արթուր Մկրտումյան ,
է. էներգետիկ ապահովման պատասխանատու՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղի «Ամասիայի էլեկտրական ցանց»-ի պետ Յուրա Հարությունյան (համաձայնությամբ),
ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի տեղակալ Արթուր Մանուկյան ,
թ. կոմունալ ապահովման և դիակների ճանաչման, հուղարկավորման կազմակերպման ու հաշվառման պատասխանատու՝ Շանթ Ավետիսյան
ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի օգնական Կարուշ Կարապետյան :

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի
2022թվականի մարտի 30-ի N 69 որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը.

1) Սույն աշխատակարգով սահմանվում են (այսուհետ՝ Աշխատակարգ) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը:

2) Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի նիստերը գումարվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման խորհրդի ղեկավարի որոշմամբ:

3) Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանով սահմանված գործողությունների իրականացումը:

4) Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները: Համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանի մշակման, ճշգրտման ժամանակ պատասխանատու են իրենց ոլորտին վերաբերվող համայնքի ԱՌԿ պլանի բաժինների համար, ինչպես նաև համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանի նախապատրաստական և արձագանքման մասերում իրենց կարգավորման ոլորտի միջոցառումների համար:

5) Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման խորհրդի ղեկավարի որոշմամբ:

6) Համայնքի աղետների ռիսկի կառավարման խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից և ներառվում են համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանում:

2. Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աղետների ռիսկի կառավարման նախապատրաստական գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը,

2) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը,

3) աղետների ռիսկի կառավարման պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը,

4) Աղետների ռիսկի նվազեցման և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը,

5) համայնքում աղետների ռիսկի նվազեցման միջավայրի և մշակույթի ձևավորումն ու դրանց տարածումը,

6) աղետներին արձագանքման համակարգի ձևավորումն, այդ նպատակով փրկարարական, հրդեհաշիջման և անհրաժեշտ կենսապահովման միջոցների ձեռք բերման, կուտակման և նպատակային օգտագործման իրականացումը,

7) աղետների ռիսկի կառավարման պլանի միջոցառումների ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

8) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը,

9) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով աղետների ռիսկի նվազեցման գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը,

10) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

11) նախապատրաստումը համայնքի բնակչությանը կատարելու փրկարարական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներ,

12) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացնումը՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով,

13) վարժանքների կազմակերպումը և անցկացնումը

14) աղետների ռիսկի կառավարման պլանի ճշգրտումը:

3. Աղետների ռիսկի կառավարման խորհրդի արտակարգ իրավիճակների արձագանքման գործառույթներն են՝

1) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը,

2) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

3) համայնքի բնակչության տարահանման իրականացումը,

4) կազմակերպում է հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանաց և երեխաների անվտանգ տարահանումը/պատսպարումը,

5) իր իրավասության շրջանակներում կազմակերպում է որոնման, փրկման և հրդեհաշիջման աշխատանքներ,

6) կազմակերպում է բնակչության նյութական և հասարակական արժեքների պահպանությունը, անվտանգության ապահովումը փրկարարական գործողությունների և տարահանման վայրերում,

7) դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխման ապահովումը,

8) ճանապարհների մաքրման, կամուրջների վերականգնման և նոր տարանցիկ ճանապարհների հիմնման ապահովումը,

9) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրման և տեղափոխման ապահովումը,

10) առաջին օգնության իրականացման ապահովումը,

11) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի հսկողության ապահովումը,

12) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը,

13) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը,

14) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը,

15) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպման, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցման ապահովումը,

16) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպման ապահովումը,

17) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերման, գրանցման և համապատասխան սոցիալական ծառայություններ ուղղորդման ապահովումը,

18) ընտանիքներին երեխաների վերամիավորման կազմակերպման ապահովումը,

19) աղետից հետո ստեղծված իրավիճակի, շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատման կազմակերպման ապահովումը,

20) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 70-Ա

«30»մարտի 2022թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԻԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի դրույթներով. հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի «Համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանի օրինակելի ձևը և մշակման ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 1460 հրամանի 1-ին կետը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի 2022 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն թիվ թիվ 1,2, 3, 4, 5, 6 հավելվածների:

2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանի հավելված N 6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«30» մարտի 2022 թվական
գյուղ Ամասիա